

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՈՒԻ ՀՐԱՊԱՐԱՎՈՒՄՆԵՐԻ ԱՐՑԱԽՅԱՆ
ՇԵՏՏԱԳՐՈՒՄՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*
(1988-1991թթ.)

Աննա Սկրտիչյան

Քանալի բառեր՝ դարաբաղյան հիմնախնդիր, դարաբաղյան շարժում, հայաստանյան մամուլ, ազգայինի վերախմաստավորում, իրավական պայքար, լրատվական դաշտ:

Ղարաբաղյան հիմնախնդիրը 20-րդ դարի հայ քաղաքական և հասարակական գիտակցությունը պայմանավորող կարևորագույն իրողություններից է: Եվ չնայած Ղարաբաղի հիմնահարցի քաղաքական ձգձգվող լուծումը պահանջում էր համարժեք արձագանք ժամանակի մամուլում, խորհրդային գաղափարախոսության պայմաններում այն լիարժեք չէր իրականացվում: Մի կողմից՝ փաստերն ու իրականությունը լռության էին մատնվում, մյուս կողմից էլ՝ որոշակի փաստերի քողարկմամբ տարածվում էր կես-ճշմարտությունը: Հատկապես շարժման առաջին տարիներին հայաստանյան հասարակության զգալի մասը բավարար տեղեկատվություն չունեի ո՛չ հիմնախնդրի առկա վիճակի, ո՛չ հնարավոր զարգացումների մասին՝ չնայած ԶԼՄ-ների տեղեկատվական գործառույթը կարևորագույն նշանակություն ունի ցանկացած հակամարտությունում: Թեպետ հանուն ճշմարտության հարկ է նշել, որ 1980-ականների վերջին խորհրդահայ մամուլի սակավախոսությունը որոշ չափով լրացրին ինքնահրատ պարբերականները՝ շատ դեպքերում իրենց խոսքն ընթերցողին հասցնելու համար ցուցաբերելով ոչ լրագրողական հմտություններ: Ավելին՝ խորհրդային մամուլին և շատ դեպքերում դրա էջերում տարածվող ապատեղեկատվությանը լուրջ մարտահրավեր նետեցին հայ անվանի մտավորականներն իրենց հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներով՝ իրականության քաղաքական ընկալմամբ և զգայական յուրօրինակ մեկնաբանմամբ:

1988-1991թթ. լրատվական դաշտի ընդհանուր պատկերը շեշտակիորեն փոխվեց՝ պայմանավորված հասարակական-քաղաքական կյանքում արձանագրվող տեղաշարժերով: Թեև այն դեռևս կրում էր խորհրդային գաղափարախոսության կնիքը, բայց ազատականացման քայլերն ընդգծված բնույթ ունեին: Այդ շրջանի հայաստանյան մամուլի հրապարակումների արցախյան շեշտադրումները հստակ էին և հասցեական: Մասնավորապես՝ մամուլի քննությունը թույլ է տալիս վերհանել ղարաբաղյան շարժմանն առնչվող հրապարակումների հիմնական ուղղությունները. դրանից են՝

- ա) Ղարաբաղի խնդիրը՝ վերակառուցման քողի ներքո և հրապարակայնության ոգով,
- բ) Հուսահատական տրամադրություններ, ընդհուպ մինչև հոգեբանական անկում,
- գ) Ղարաբաղյան խնդրի լուծում և խաղաղության հաստատում,
- դ) «Ազգայինի» վերախմաստավորում,
- ե) Իրավական պայքար,
- զ) Տեղեկատվական հարթություն. մտահոգություններ, խնդիրներ:

Այսպես՝ Ղարաբաղյան հիմնախնդիրն սկզբնական շրջանում ներկայացվում էր բացառապես վերակառուցման քողի ներքո և հրապարակայնության ոգով, ինչը դրս-

* Հոդվածն ընդունվել է 15.02.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.թ., դոցենտ Ն.Ն.Մարտիրոսյանը:

և որվում էր պաշտոնական լրահոսում, խորհրդային իշխանության ուղերձներում, համապատասխան որոշումներում, ժողովուրդների բարեկամության քարոզչությունն իրականացնելիս, ինչպես նաև ռուսական մամուլից հաճախակի արված արտատպումներում: Վերոնշյալներն ամենօրյա լրատվության բաղկացուցիչ մասն էին կազմում:

Պաշտոնական լրահոսն ընդգրկում էր սեղմ հաղորդագրություններ, որոնք տարածում էին լրատվական գործակալությունները, առավելապես ՏԱՍՍ-ը [1]: Եվ ընդհանրապես, խորհրդային Հայաստանի պարբերական մամուլի տեղեկատվության հիմնական աղբյուրներն էին կենտրոնական «ՏԱՍՍ» և «Նովոստի», հանրապետական «Արմենպրես» պետական լրատվական գործակալությունները: Բացի այդ՝ խորհրդային Հայաստանի գրեթե բոլոր թերթերը [2] տպագրում էին «ԼՂ-ի և նրա շուրջ ստեղծված իրադարձությունների կապակցությամբ» իշխանությունների ուղերձները, որոնք, որպես կանոն, լայն արծազանք էին գտնում: Այսպես՝ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը, դիմելով Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին, կոչ էր անում հանդես բերել զսպվածություն, ողջախոհություն, «թանկ գնահատել և ամրապնդել ադրբեջանական և հայ ժողովուրդների բարեկամության ավանդույթները» [3]: ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրձյանն էլ իր ելույթում փորձում էր հանդարտեցնել ժողովրդական շարժումը՝ նշելով, որ «ստեղծված իրադրությունը հիմնականում նորմալացվել է» [4]:

Մամուլի հաղորդագրությունների, ՍՄԿԿ ԿԿ այլեւնումի տղագրությունների ու Գլխավոր քարտուղարի ճառերի տեքստերի ամբողջական հրատարակումը թերթերի գլխավոր և հիմնական գործն էր: Այդպես մամուլը, ըստ էության, ծնագնում էր, թե առաջնորդվում է վերակառուցման ոգով: Զանգվածային տեղեկատվության բոլոր միջոցներում ՏԱՍՍ-ի թղթակիցները տպագրում էին հավասարության սկզբունքներով հայերից և ադրբեջանցիներից վերցրած հարցազրույցներ, ժողովուրդների բարեկամությանը նվիրված նամակներ, երկու հանրապետությունների աշխատավորների և կոլտնտեսականների «հերոսական նվաճումների» մասին ակնարկներ: Լրագրային ժանրերի ընձեռած բազմաթիվ հնարավորությունները թողնելով մի կողմ՝ ամեն տեղ մեջբերում էին «Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին ուղղված Գորբաչովի դիմումը»: Փոխարենն այդ շրջանում մամուլն այդպես էլ չտպագրեց որևէ հաղորդագրություն Երևանում տեղի ունեցած ցույցերի և հավաքների մասին, մինչդեռ հարյուր հազարավոր մարդիկ փողոց էին դուրս եկել:

Զարգացող իրադարձությունները նոր փորձություն էին ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հայաստանյան մամուլի համար: Սումգայիթյան ջարդերն ու դրան հաջորդած դատավարությունը, «Ղարաբաղ» կոմիտեի կազմավորումն ու գործունեության կասեցումը, Սպիտակի աղետալի երկրաշարժը, մեկը մյուսին հաջորդող ցույցերը, գործադուլները, դասադուլները, պարետային ժամը, Բաքվի ջարդերը ու ի վերջո պատերազմական լրահոսը:

Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ հուսահատական տրամադրություններ էին նկատվում հայաստանյան մամուլում: Հոգեբանական անկումն առաջին հերթին դրսևորվեց սումգայիթյան ջարդերի [5] ու դրան հաջորդած դատավարության, ապա՝ Սպիտակի աղետալի երկրաշարժի, շարունակվող գործադուլների ու դասադուլների, հայտարարված պարետային ժամի, Արցախի շուրջ սեղմվող օղակի [6], քաղաքական հացադուլավորների (Մոսկվայում հացադուլ էին սկսել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Զ. Բալայանը, Կ. Համբարձումյանը, Ս. Սարգսյանը, Կ. Գրիգորյանը, ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի նախագահ Ս. Բաբայանը) [7] և այլնի մասին հրապարակումներում: Ավելին՝ այս ընթացքում մամուլում առաջին անգամ խոսվեց ինքնաշեն պայթուցիկ սարքերի, սառը զենքի և այլնի մասին:

Արցախի սահմանամերձ շրջաններում չէին դադարում զինված ընդհարումները, բռնություններն ու կամայականությունները, որոնք մասնույն օգտագործում էր իբրև տեղեկատվական առիթ հրատապ հարցազրույցներ, ռեպորտաժներ տպագրելու համար՝ ահազանգելով «Ձեռքից բաց թողնված հնարավորությունների և զարգացման ստրատեգիայի մասին»[8]:

1990 թվականի հենց տարեսկզբից իրավիճակն ավելի ծանրացավ. սկսվեցին զանգվածային հայկական ջարդերը և կոտորածներն ադրբեջանական հայաշատ քաղաքներում (Բաքու[9], Կիրովաբադ), Ադրբեջանի ծայրահեղական ուժերի կողմից զինված գործողություններ իրականացվեցին Բաքվում, Շահումյանի և Խանլարի շրջաններում, Գետաշեն, Ազատ, Կամո գյուղերում և այլ բնակավայրերում: Կային մարդկային զոհեր, հրկիզումներ, շրջափակում, պատանդներ, նաև կրակոցներ Հադրութի գյուղերում[10]: Բացի այդ՝ խստացավ Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի շրջափակումը, հայտարարվեց արտակարգ դրություն, խաղաղ բնակչության դեմ ուղղվեցին պարբերական ռազմական գործողություններ, եղան տեղահանումներ, հալածանքներ շարժման առաջամարտիկների և ժողովրդական պատգամավորների նկատմամբ և այլն: Մամուլը փորձում էր ծեռքը պահել Ղարաբաղի զարկերակին՝ ներկայացնելով կյանքի տարբեր ոլորտներում առաջացած «ծանրագույն վիճակը»[11]: Անգամ Լեռնային Ղարաբաղին առնչվող նյութերն սկսեցին տեղ գտնել թերթի առաջին էջերում: Ավելին՝ այս շրջանում հայաստանյան թերթերում կտրուկ փոխվեց վերնագրերի ընտրության քաղաքականությունը, ինչն արտահայտվեց մասնույն համարձակ վերնագրերի առատությամբ՝ «Նոր հարձակում, նոր զոհեր», «Հայության զարկերակն է Ղարաբաղը»[12], «Վերակառուցում... ադրբեջանական ծնով[13]» և այլն:

Ստեղծված պայմաններում մամուլը ձգտում էր ուշադրության կենտրոնում պահել թե՛ պաշտոնական լրահոսը, թե՛ իրադարձությունների զարգացումներով պամանավորված առանձին մարդկանց ձակատագրերը՝ ներկայացնելով փախստականներին ու նրանց խնդիրները[14], տազնապն ու ցավը, Սոււմգայիթի շարունակվող ոճրագործությունը[15]:

Տարեվերջին ԼՂ-ից հասած գրեթե բոլոր լուրերը հիշեցնում էին պատերազմական հաղորդագրություններ, որոնք պատմում էին հերթական սպանությունների, հրկիզումների, պատանդների, անասունների կողոպուտի մասին: Արդյունքում՝ ամեն կրակոցի հետ փոխվում էր նաև մամուլի լեզուն և ոճը[16]. «Մենք ոտքի ենք ելել, որովհետև այլևս ոչինչ չունենք վաղը կորցնելու: Սա այն ժամանակն է, երբ կարելի է շատ բան փրկել»[17] ու չնայած «1990 թ-ն անցավ ի վնաս Արցախի և հօգուտ նրա հիմնախնդրի էլ ավելի խճճման ու բարդացման, բայց Արցախը հաղթելու է» [18]:

1991թ. դեկտեմբերին Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից իրականացվող պատերազմական գործողություններն առավել ակտիվացան: Պատահական չէր, որ այս ամենի հետևանքով ինչպես տեղեկատվությունը, այնպես էլ լրագրողական աշխատանքը որոշակի փոփոխություններ կրեցին ոչ միայն բովանդակային առումով, այլև ժանրային, իսկ լուսանկարները, որ այդ շրջանում դարձան հրապարակումների անբաժան մասը, ըստ էության, նորություն էին ժամանակի մամուլի համար:

Հոգեբանական անկումը մեղմելու և կյանքը բնականոն հուն վերադարձնելու ու դարձյալ խաղաղություն հաստատելու նպատակով մամուլը կոչերի և ուղերձների միջոցով փորձում էր լավատեսական տրամադրություններ[19] հաղորդել ընթերցողներին: Այդ առումով հատկանշական են հատկապես Հայաստանի և Արցախի մտավորականների ջանքերը: Նրանք մամուլի առաջին էջերում հաճախ էին հանդես գալիս ելույթներով, բանաստեղծություններ գրում, որոնք միտված էին հանդարտեցնել բոր-

բոքվող կրքերը՝ միաժամանակ հույս ու հավատ ներշնչել խնդրի մոտալուտ լուծման հեռանկարի առնչությամբ: Ժամանակի մտավորականները «բարձր գիտակցության, կարգուկանոնի, հանգստության, ողջախոհության» կոչ էին անում ժողովրդին [20]: Արդարության հասնելու և հաղթանակի ձգտումով ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Էդգար Հովհաննիսյանը, գրողներ Վահագն Դավթյանը[21], Հրաչյա Մաթևոսյանը[22], Ալվարդ Պետրոսյանը[23] և ուրիշներ շարունակ «սթափ դիրքորոշման», զսպվածության ու խելամտության կոչեր էին հնչեցնում: Հորդորելով վերադառնալ բնականոն կյանք՝ մտավորականները ընդգծում էին «հանգստություն պահպանելու և զգոնությունը չկորցնելու»[24] անհրաժեշտությունը:

Մտավորականների հստակ ու հասցեական խոսքը մի կողմից՝ հանդարտեցնում էր ընթերցողների գերլարված տրամադրությունները, նպաստավոր միջավայր ստեղծում հոգեբանական ճնշվածությունը թթափելու համար, մյուս կողմից՝ պահանջատեր հայության համար պայքարի նոր ուղղություններ ուրվագծում: Հենց այդ ժամանակաշրջանում էր, որ ազգային աստիճանաբար գերիշխող դարձավ կյանքի տարբեր ոլորտներում՝ սկսած մշակութային պահանջումից մինչև պետական տոների ու խորհրդանիշների վերականգնում, անցյալի հերոսների արժևորում, անգամ հայոց լեզվի անաղարտության համար պայքար[25]: Հատկապես 1989 թ. տարեվերջին հայաստանյան մամուլում հայտնվեցին հրապարակումներ Արամ Մանուկյանի[26], Գարեգին Նժդեհի[27], Արամ Երկանյանի, Հայոց ցեղասպանության[28], անգամ 1920թ. ստորագրված Սևրի պայմանագրի մասին[29]:

Դեպքերի աննախադեպ սրընթաց զարգացումները հարստացրին մամուլի բովանդակությունը: Հանրահավաքներն ու գործադուլներն ապարդյուն էին, կրակոցները հաճախակիանում էին, կորուստները՝ ավելանում, զոհերի թիվը՝ աճում: Հետևաբար հրապարակ դուրս եկած հայր փոխեց պայքարի ուղղությունը՝ փորձելով խնդրի լուծմանը հասնել իրավական ճանապարհով: Արցախում կազմակերպվեց հանրաքվե, անցկացվեցին ընտրություններ, մարզը հռչակվեց հանրապետություն ու մեկնարկեց անկախության երթը: Ավելին՝ պատերազմական գործողություններին զուգահեռ սկսվեց ԼՂՀ-ի՝ իբրև առանձին պետության կայացման գործընթացը:

Ոչ թե գեների ուժով, այլ օրենքի շրջանակում խնդրի լուծմանը սպասողներն ու հավատացողները շատ էին, թեպետ ժամանակ առ ժամանակ կրակոցներ էին լսվում: 1991թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) ստեղծումով արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց նոր փուլ: Իրական անկախության ճանապարհին ԼՂՀ ստեղծումն ամենավճճորոշ և գործնական քայլն էր: Դրան հաջորդեցին իրավական, քաղաքական, ռազմական և դիվանագիտական ինքնահաստատման գործողությունները[30]:

Այդ ժամը ժամանակաշրջանում մասնագիտական մարտահրավերների առաջ էր կանգնած նաև հայաստանյան մամուլը: Տեղեկատվական միջավայրը լուրջ խնդիրներ ուներ թե՛ բովանդակային, թե՛ տեխնիկական առումներով, որոնց լուծմամբ էին պայմանավորված տեղեկատվության տարածման հնարավորությունները: Կիսատ տեղեկատվություն հաղորդող, հաճախ նաև լռություն պահպանող մամուլը սկզբնական շրջանում հիասթափեցնող գործունեություն էր իրականացնում: Վստահության ձգնաժամի մթնոլորտում մամուլը չէր իրականացնում իրեն վերապահված գործառնությունները: Ժամանակի ընթացքում այդ ամենին գումարվում էին նաև տպագրական խնդիրները (տնտեսական ծանր վիճակ), տարածման դժվարությունները (շրջափակում): Ընթերցողները սպասում էին տեղեկատվության ու հետևում էին մամուլի հրապարակումներին՝ միաժամանակ գիտակցելով, որ թերթերը դարձել էին ապատեղեկատվություն

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

տարածող ու իրականության շինծու պատկեր ստեղծող օրգաններ: Պատահական չէր, որ «մարտի 20-ին մոտ երեք հազար ցուցարարներ, հանրապետությունում լույս տեսնող լրագրերը ձեռքներին, հավաքվեցին մամուլի տան մոտ և ի նշան բողոքի՝ լրագրերը թափեցին գետնին և վանկարկեցին՝ ամոթ: Հետո բոլորը շարժվեցին դեպի ռադիոտուն, որտեղ կայացավ հանրաժողով: Բողոքի այդ ցույցն ուղղված էր Հայաստանի ու ՍՍՀՄ մամուլի ու հեռուստատեսության դեմ, որոնք ոչ մի ճշգրիտ տեղեկություն չեն հաղորդում... Ոչ մի լուր չեն տալիս մեկ ամսից ավելի հայության կյանքը փոթորկող իրադարձությունների մասին»[31]:

Ըստ էության՝ արցախահայությունը ծանր օրեր էր ապրում, բայց միաժամանակ շարժումը մեծ թափով զարգանում էր, զուգահեռաբար ձաքեր էր տալիս Խորհրդային կայսրությունը՝ բնականաբար նաև ճանապարհ բացելով մամուլի նոր անունների համար: Իրականում՝ Խորհրդային ապատեղեկատվության կազմակերպած արշավը դրական կողմ ունեցավ. այն ավելի հրատապ ու անհրաժեշտ դարձրեց ազատ մամուլի նոր անունների ծնունդը[32] ու նաև դրանով պայմանավորված որակապես նոր բովանդակություն ստացավ լրատվական դաշտը՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի համատեքստում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Սովետական Հայաստան», 24-25 փետրվարի, 1988:
2. «Գրական թերթ», 4 մարտի, 1988: «Հայրենիքի ծայն», 2 մարտի, 1988: «Հայրենիքի ծայն», 2 մարտի, 1988:
3. «Սովետական Հայաստան», 27 փետրվարի, 1988:
4. «Գրական թերթ», 25 մարտի, 1988:
5. «Հայաստան», 5-6-7 սեպտեմբերի, 1990:
6. Նույն տեղում, 12 սեպտեմբերի, 1990:
7. Նույն տեղում, 18 սեպտեմբերի, 1990:
8. «Խորհրդային Հայաստան», 24 հուլիսի, 1990:
9. «Երեկոյան Երևան», 15 փետրվարի, 1990:
10. «Խորհրդային Հայաստան», 14 հունվարի, 1990:
11. «Երեկոյան Երևան», 12 հունվարի, 1990:
12. «Երեկոյան Երևան», 5 հունվարի, 1990:
13. «Խորհրդային Հայաստան», 9 հունվարի, 1990:
14. Նույն տեղում, 17 հունվարի, 1990:
15. Նույն տեղում, 19 հունվարի, 1990:
16. «Երեկոյան Երևան», 17 դեկտեմբերի, 1990:
17. «Ավանգարդ» 19 դեկտեմբերի, 1990:
18. «Հայաստանի Հանրապետություն», 10 հունվարի, 1991:
19. «Խորհրդային Հայաստան», 25 մայիսի, 1989:
20. «Սովետական Հայաստան», 26 փետրվարի, 1988:
21. «Գրական թերթ», 25 մարտի, 1988:
22. «Հայրենիքի ծայն», 14 դեկտեմբերի, 1988:
23. «Գարուն», N 6, 1988:
24. «Հայաստանի Հանրապետություն», 1 մայիսի, 1991:
25. Տե՛ս Եազըճեան Գ., Հայաստանի 1985-1991թթ. պարբերական մամուլը, Անթիլիաս 2004, էջ 85:

- 26.«Ավանգարդ» 5 նոյեմբերի, 1989: «խորհրդային Հայաստան», 9 օգոստոսի, 1989:
- 27.Նույն տեղում, 13 նոյեմբերի, 1989:
- 28.«խորհրդային Հայաստան», 15 ապրիլի, 1990:
- 29.«Ավանգարդ» 3 դեկտեմբերի, 1989:
- 30.«Ազգ», 4 սեպտեմբերի, 1991:
- 31.Նույն տեղում:
- 32.Տե՛ս Եազըճեան Գ., Հայաստանի 1985-1991թթ. պարբերական մամուլը, էջ 59:

ԱՄՓՈՓՈՒԿԻՐ

Հայաստանյան մամուլի հրապարակումների արցախյան շեշտադրումները խորհրդային ապատեղեկատվության համատեքստում (1988-1991թթ.) Աննա Մկրտիչյան

1988-1991թթ. հայաստանյան լրատվական դաշտի ընդհանուր պատկերը շեշտա-
կիրորեն փոխվեց՝ պայմանավորված հասարակական-քաղաքական կյանքում արձա-
նագրվող տեղաշարժերով: Թեև այն դեռևս կրում էր խորհրդային գաղափարախոսու-
թյան կնիքը, բայց ազատականացման քայլերն ընդգծված բնույթ ունեին: Այդ շրջանի
հայաստանյան մամուլի հրապարակումների արցախյան շեշտադրումները հստակ էին
և հասցեական:

РЕЗЮМЕ

Статьи о Карабахе в прессе Армении в контексте советской дезинформации (1988-1991 гг.) Анна Мкртчян

Ключевые слова: карабахская проблема, карабахское движение, армянская пресса, переосмысление понятия "национальный", юридическое сражение, информационное поле.

В 1988-1991 гг. кардинально изменилась общая картина информационный сферы, в связи с перемена в общественной и политической жизни. Несмотря на то, что пресса несла на себе отпечаток советской идеологии, были сделаны шаги по либерализации. В этот период в армянской прессе появились статьи о Карабахе, которые имели ясные акценты и целенаправленный характер.

SUMMARY

Articles about Karabakh in the media of Armenia in the context of Soviet disinformation (1988-1991) Anna Mkrtychyan

Keywords: the Karabakh issue, the Karabakh movement, Armenian press, the reevaluation of the concept "national", legal battle, information field.

From 1988 to 1991 the overall picture of the media in Armenia changed cardinally, due to the changes in public and political life. Although it still had the soviet ideology, it manifested liberalization steps. During that period the articles in Armenian press were focused on Karabakh.